ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ (2-րդ կիսամյակ)

2019 թվականի դեկտեմբերի 28-ին Արարատի մարզի Բարձրաշեն համայնքում տեղի ունեցավ հանրային լսում, որը նախագահում էր Բարձրաշեն համայնքի ղեկավար՝ Սերոբ Հակոբյանը, քարտուղարում էր աշխատակազմի քարտուղար՝ Ն.Մարգարյանը:

Մասնակցում էին համայնքի ավագանու անդամները, համայնքապետարանի աշխատակազմը, համայնքի բնակիչներ:

ԼՍԵՑԻՆ, – Արարատի մարզի Բարձրաշեն համայնքի ղեկավարի հաշվետվությունը՝ 2019 թվականի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:

Արձանագրվեց, որ 2019 թվականի ընթացքում համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները՝

- համայնքապետարանը բնակիչներից ստացել է 79 դիմում-գանգատներ, ինչպես նաև բանավոր հարցումներ, որոնք քննարկվել են համայնքապետարանի աշխատակազմում և ավագանու նիստերի ժամանակ ու տրվել համապատասխան ընթացք.
- բնակիչներին տրվել են 195 տեղեկանք, ստացվել է 378 պաշտոնական գրություններ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, որոնք քննարկվել են և սահմանված ժամկետներում տրվել պատասխաններ, ելք է եղել 229 գրություն.

-կազմակերպվել են համայնքի վարչական տարածքում սանմաքրման աշխատանքներ, որոնք կրում են պարբերական բնույթ.

-քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման, սահմանների ճշտգրտման և հողատեսքերի փոփոխման և ձևակերպման աշխատանքներ,

- սուբվենցիոն ծրագրի միջոցով համայնքում կառուցվող գբոսայգու աշխատանքները ավարտվեցին, իսկ գարնանը կկատարվի ծառատնկման ու կանաչապատման աշխատանքները և համայնքի բնակիչները իրենց հանգիստը կանցկացնեն այգում.

-կատարվել է կուլտուրայի տան մպսնակի վերանորոգում և նախատեսված է վերանորոգման աշխատանքները շարունակել 2020թվականին:

Նշվեց նաև, որ 2019թ. ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են՝

ա/ հողի հարկ՝ 1309.200դրամ.

բ/ գույքահարկ՝ 4175.100 դրամ.

գ/ տեղական տուրք՝ 136.800 դրամ.

դ/ վարձարձակալված հողերից գանձված վարձավճար՝ 216.600դրամ.

ե/տեղական վճար/ծնողական վճար/՝ 1720.200դրամ.

զ/աղբահանության վճար՝ 1433.189դրամ.

ը/հողի օտարումից եկամուտներ՝ 1675.005դրամ

2019 թվականի համայնքի բյուջեի ծախսերի կատարողականը կազմել է՝ 40626.036դրամ, որից՝

- համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին՝ 1650.000 դրամի ֆինանսական աջակցություն.

-աղբահանման աշխատանքների համար ծախսվել է՝ 1512.000դրամ.

- թաղման ծախս՝ 400.000 դրամ.
- մանկապարտեզ՝ 12513.800 դրամ.
- մշակույթի տուն՝ 1799.600դրամ.
- կառավարման ապարատ՝ 19911.420 դրամ:
- գյուղատնտեսական ոլորտի ծառայություններ՝ 1440.000 դրամ.

- կեղտաջրերի հեռացում՝ 500.000դրամ.
- հասարակական կազմակերպություններին աջակցություն՝ 63.900դրամ.
- գույքի նկատմամբ իրավունքի իրականացում՝ 226.000դրամ.
- լուսավորության ցանցի աշխատանքների համար՝ 250.000դրամ.
- մշակույթի տան հիմնանորոգում՝ 561.800դրամ.
- զբոսայգու աշխատանքների համար՝ 400.000դրամ
- ոռոգման ցանցի վերանորոգում՝ 220.000դրամ
-

ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ՀԱԿՈԲՅԱՆ